ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«05» 10 2022թ.
No 006070

«ՎԱՆ ՔԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., 4/7,
պատճենը՝ ք. Երևան, Նոր Նորք, Գայի պ., 2/3,
Էլ. փոստի հասցե՝ ceo@blackfoxconsult.com)

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հոկտեմբերի 4-ի ««Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-01488/22 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 368-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 17 հոկտեմբերի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 368-Ա

«ՎԱՆ ՔԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-01488/22 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 4-ի նիստում, քննարկելով «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-01488/22 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 6-ին ««Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 246-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-01488/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում հասարակության մոլորեցման դրսևորմամբ և անտեղի համեմատության կատարմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Թիվ 246-Ա որոշումն ուղարկվել է Ընկերության ք. Երևան, Ամիրյան փ., 4/7 իրավաբանական հասցեով, սակայն Ընկերությունը չի ստացել, և այն վերադարձվել է «Տեղափոխված» նշումով:

Հանձնաժողովը թիվ 246-Ա որոշումը 2022 թվականի օգոստոսի 11-ին հրապարակել է «www.azdarar.am» ու «competition.am» կայքերում և 2022 թվականի օգոստոսի 16-ից այն համարվել է Ընկերությանը պատշաճ հանձնված:

Բացի այդ, թիվ 246-Ա որոշումն ուղարկվել է Ընկերության տնօրենին՝ ք. Երևան, Նոր Նորք, Գայի պ., 2/3 հասցեով: Ընկերության տնօրենը 2022 թվականի օգոստոսի 1-ին

ստացել է թիվ 246-Ա որոշումը և 2022 թվականի օգոստոսի 17-ին ներկայացրել է սույն գործի վերաբերյալ դիրքորոշում՝ չընդունելով իր կողմից կատարված իրավախախտման փաստը:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 19-ի թիվ 4639 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն:

Ի պատասխան Գրության՝ Ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել Գրությամբ պահանջված տեղեկատվության մի մասը, իսկ մյուս մասն Ընկերությունը հրաժարվել է ներկայացնել:

Հանձնաժողովը 2022 թվականի սեպտեմբերի 13-ին թիվ 328-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-02404/22 վարույթը՝ Ընկերության կողմից առերևույթ ոչ ամբողջական տեղեկություն ներկայացնելու դրսևորմամբ Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման հատկանիշների հիմքով:

Ընկերությունը 2022 թվականի սեպտեմբերի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ 2022 թվականի հունիսի 7-ից չի տիրապետում վերը նշված տեղեկատվության մի մասին, ուստի այն չի կարող տրամադրել Հանձնաժողովին:

Հաշվի առնելով ողջ շարադրյալը և Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու անհրաժեշտությունը, Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ և առկա է Վարույթի ժամկետը եռամսյա ժամկետով երկարաձգելու անհրաժեշտություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2022 թվականի հոկտեմբերի 6-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-01488/22 վարույթի ժամկետը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2022 թ. հոկտեմբերի 4
Երևան